ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2015- 04.12/631
04.12.2015 թ.

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ
Տիգրան Մուկուչյանին

Հարգելի պարոն Մուկուչյան,

ՀՔԱ Վանաձորի գրասենյակ հասարակական կազմակերպությանը ժառանգություն կուսակցության ներկայացուցչի ահազանգի հիման վրա ուսումնասիրել է բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմը և հայտնաբերել, որ հանձնաժողովի անդամների թվում կան ավագանու անդամներ:

ՀՀ ընտրական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ընտրական հանձնաժողովի անդամ չեն կարող լինել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-154.6-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձինք: Ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամ չեն կարող լինել Ազգային ժողովի պատգամավորները, սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, դատախազները, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության ծառայողները, նախարարները և նրանց տեղակալները, մարզպետները և նրանց տեղակալները, համայնքների ղեկավարներն ու **ավագանու անդամները**, ոստիկանությունում և ազգային անվտանգությունում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, քրեակատարողական հիմնարկներում ծառայողները, զինծառայողները, վստահված անձինք, լիազոր ներկայացուցիչները, դիտորդները, թեկնածուները:

Հանրաքվեի մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասին համաձայն՝ Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովները կազմավորվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմավորման համար սահմանված կարգով: Եթե հանրաքվեն անցկացվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների օրը, ապա հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի լիազորություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով ստեղծված տեղամասային ընտրական հանձնաժողովը:

Վերը նշված իրավական ակտերի տրամաբանական վերլուծությունից հետևում է, որ ընտրատարածքային և տեղամասային հանձնաժողովի անդամներ, ի թիվս այլոց, չեն կարող լինել համայնքի ավագանու անդամները, նույն կարգավորումը վերաբերում է նաև Հանրաքվեի տարածքային և տեղամասային հանձնաժողովներին: Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը հայտնաբերել է բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմը և հայտնաբերել, որ ընդհանուր առմամբ 203 ավագանու անդամ է ներգրավված տեղամասային ընտրական հանձնաժողովներում, որից Արագածոտնում՝ 18, Արարատում՝ 30, Արմավիրում՝ 7, Գեղարքունիքում՝ 32, Լոռիում՝ 22, Կոտայքում՝ 17, Շիրակում՝ 38, Սյունիք՝ 17, Վայոց Ձոր՝ 14, Տավուշ՝ 8: Ընդ որում նրանցից 83-ը ներկայացված է համապատասխան Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից, 50-ը՝ Հայաստանի հանրապետական կուսակցության, 22–ը Հայ հեղափոխական դաշնակցության, 21-ը Բարգավաճ Հայաստան կուսակցության, 12-ը Օրինաց Երկրի, 10-ը Հայ ազգային կոնգրեսի և 5-ը Ժառանգություն կուսակցության կողմից: Հարկ է նշել, որ Ժառանգություն կուսակցության վերոնշյալ ներկայացուցչի կողմից տրամադրվել է Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք մարզերի իրենց կատարած ուսումնասիրության տվյալները, որոնցում իրենք հայտնաբերել են Ժառանգություն կուսակցության կողմից նշանակված 5 անդամ, որոնց իրենք փոխարինել են անմիջապես հայտնաբերելուց հետո և ՀՔԱ Վանաձորի ուսումնասիրության ժամանակ այդ անձանց անունները արդեն չեն եղել:

Ելնելով վերը նշածից և ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգրքի և հանրաքվեի մասին ՀՀ օրենքի դրույթներով, դիմում եմ Ձեզ համապատասխան միջոցառումներ վերը նշված խախտումը վերացնելու և ավագանու անդամների փոխարեն այլ հանձնաժողովի անդամներ ներգրավվելու ուղղությամբ:

Կից ներկայացվում է ավագանու անդամների ցուցակը, ովքեր ընդգրկված են հանձնաժողովներում:

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

կատ. Անի Չատինյան
achatinyan@hcav.am
Հեռ. 094042268